«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Ռոզա Հարությունյան

Մանկապարտեզ՝ «հ 3» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....2

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1. Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում.....6

ԳԼՈՒԽ 2. Հետազոտական աշխատանք.դասի պլան.....9

Եզրակացություն.....13

Գրականության ցանկ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու իր հատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան, քան նրանց այդ ունակությունը մերով փոխարինելու փորձը:

Ժան Ժակ Ռուսո

Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ ակտիվություն և ինքնուրույնություն, շփումներ, անմիջականորեն հաղորդակից լինել մեծահասակների կյանքին, ճանաչել արտաքին աշխարհը և արտացոլել այն: Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները, ձևավորվում նորագոյացություններ, որոնք նախապատրաստում և ապահովում են երեխայի հոգեկանի զարգացման հաջորդ փուլը: Խաղի ընթացքում երեխան փորձում է ինքնահաստատվել և, բնականաբար, ջանում է առավելագույնս դրսևորել իր բոլոր հակումներն ու կարողությունները: Խաղը նաև երեխայի ընդունակությունների և կարողությունների ախտորոշման արդյունավետ միջոց է:

Երեխաների արդյունավետ և տարիքային առանձնահատկություններին համապատասխան զարգացման խնդիրը մեզ դրդում է օգտվել այնպիսի խաղային մեթոդներից, ինչիսիք են խաղերը: Նախադպրցական տարիքում գործունեության առաջատար տեսակը խաղն է: Խաղն առաջատար է դառնում ոչ այն պատճառով, որ երեխան որպես կանոն իր ժամանակի մեծ մասն անցկացնում է խաղալով և համեմատաբար քիչ է ներգրավվում մեծահասակների աշխատանքային գործունեության մեջ:

Մեր աշխատանքի նպատակը: Մենք նպատակն է բացահայտել երեխաների մոտ խաղի ընթացքում հույզերի արտահայտման առանձնահատկությունները և զարգացումը, ինչպես նաև.

1. Դերային խաղերի միջոցով՝ զարգացնել կրտսեր դպրոցականների բանավոր խոսքը:

2. Դրանց կիրառմամբ նրանց մեջ անհրաժեշտ որակներ ձևավորել՝ բառապաշարի հարստացում, երևակայության զարգացում, ստեղծագործական մտքի ձևավորում:

Թեմայի արդիականություն: Թեման արդիական է մեր օրերում, քանզի այն համարվում է ներկայիս կարևորագույն հարցերից մեկը: Նախադպրոցական երեխաների հետ աշխատանքի լավագույն միջոցը խաղն է:

Մանկապարտեզներում, մանկական զարգացման կենտրոններում դասավանդողների պատրաստվածությունն այս թեմայով ևս շատ հրատապ ու կարևոր է:

Աշխատանքի խնդիրները: Իսկ մեր նպատակն իրականացնելու համար մեր առաջ դրել ենք հետևյալ **խնդիրները՝**

- Կրտսեր տարիքի երեխաների խաղի ուսուցման դասավանդման շնորհիվ նպաստել երեխաների երևակայության, ինքնուրույն մտածողության զարգացմանը,
- Ուսումնասիրել նախադպրոցական տարիքը և նախադպրոցական գործունեությունը
- Ուսումնասիրել խաղի հոգեբանությունը և դրա նշանակությունը,
- Բացահայտել երեխաների հուզական վիճակը

Մեր ուսումնասիրման օբյեկտը՝ երեխան է:

Օգտագործված գրականությունը. Աշխատանքում օգտագործել ենք ոչ միայն հայալեզու գրքեր և ամսագրեր, այլ նաև օտարալեզու: Սույն աշխատանքը գրելիս օգտվել ենք «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդեսից[1], օգտվել են նաև ձեռնարկներից[2], որոնցում մանրամասն ներկայացվում է խաղի դերը երեխայի զարգացման գործում, ինչպես նաև ներկայացվում է հայտնի մարդկանց մտքերը, ովքեր անդրադարձել են խաղին և վերջինիս նշանակությանը: Աշխատանքը գրելիս

[1] «Նախաշավիղ» Գիտամեթոդական հանդես, հիմնադիր և հրատարակիչ՝ Կրթության ազգային ինստիտուտ 3.2003: «Նախաշավիղ», 4. 2011, «Նախաշավիղ», 5. 2016,
[2] «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», ձեռնարկ

օգտվել են նաև ինտերնետային նյութերից[3]: Օգտվել ենք նաև «Դպիր» մանկավարժական հանդեսից[4]:

Այս թեմայի մասին է խոսել նաև Մարությանը և Դալլաքյանը[5] իրենց «նախադպրոցական մանկավարժություն» ձեռնարկում:

Հետազոտության առարկան: Խաղը և դրա դերն ու նշանակությունը նախադպրոցական երեխաների զարգացման գործում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Մեր աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից՝ տեսական և հետազոտական:

Առաջին գլուխում անդրադարձել ենք Դերային խաղին, նրա նշանակությանը, առանձնացրել ենք կարևոր կետերը, Երկրորդ գլուխը, գործնական մասն է, մենք ներկայացրել են դասի պլան, ամբողջական տեսքով: Աշխատանքը ունի եզրակացություն և գրականության ցանկ:

ՈՒսումնասիրության մեթոդական հիմքերը

Հետազոտության համար հիմք են ծառայել՝

- Համեմատական վերլուծության,
- Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրումն ու ընդհանրացումը:

---

[3] https://kznakgnahatum.blogspot.com/, http://planetadetstva.net/vospitatelam/ gotovimsya-k-shkole/didakticheskie-igry-na-razvitie-myshleniya.html.

[4] «Դպիր», Մխ. Սեբաստացի կրթահամալիրի մանկավարժական հանդես, 2012, էջեր 40:

[5] Մարությանի Ս.Ա., Դալլաքյանի Ա.Մ. խմբագրությամբ Նախադպրոցական մանկավարժություն, 2005:

ԳԼՈՒԽ 1. ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում:

Խաղը շատ կարևոր է երեխայի զարգացման համար: Վաղ տարիքում խաղը երեխայի հիմնական գործունեությունն է: Խաղով է նա ճանաչում ինքն իրեն, աշխարհը, սովորում է խոսել, շփվել, պահպանել ընդունված նորմերը և այլն:

Խաղը զարգացնում է երեխայի ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, ստեղծագործելու կարողությունը, հաղորդակցման կարողությունը, շարժողականությունը, ակտիվությունը, ընկալումը, օգնում է արագ կողմնորոշվել, դրական է ազդում հիշողության վրա[6]:

Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում:

Երեխային շատ են անհրաժեշտ դերային խաղերը, դրանք նրան օգնում են նախապատրաստվել կյանքին ու հասարակությանը:

Այսպես՝ վաղ մանկության և նախադպրոցական տարիքի սահմանում ծագում են մանկական խաղերի առաջին տեսակները. օրինակ՝ զարգանում է պատկերավոր դերային խաղը: Նրանում երեխան երևակայում է ցանկացած մեկին, ցանկացած բանի նմանվում ու դրան համապատասխան գործում:

Դերային կամ ստեղծագործական խաղը ի հայտ է գալիս նախադպրոցական տարիքում: Սա այն գործունեությունն է, որում երեխաները իրենց վրա վերցնում են

[6] «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, հիմնադիր և հրատարակիչ՝ Կրթության ազգային ինստիտուտ, 4. 2011, էջ 35-36:

մեծահասակների դերերը և ընդհանրացված ձևով, խաղային պայմաններում վերարտադրում մեծահասակների գործունեությունը և նրանց միջև հարաբերությունները: Երեխան ընտրելով որևէ դեր, ունի համապատասխան կերպար՝ մոր, բժշկի, վարորդի և այլն: 1,5 տարեկանից փոքրիկը ընդօրինակում է այն, թե ինչպես է մայրը լվանում ափսեները, ինչպես է պապիկը կարդում[7]:

Յուրաքանչյուր խաղ ունի իր խաղային պայմանները, նրանում մասնակցում են երեխաները, խաղալիքները և այլ առարկաներ: Եթե 3-4 տարեկանում երեխան խաղում է 10-15 րոպե, իսկ այնուհետև նա պետք է այլ բանով զբաղվի, ապա 4-5 տարեկանում մի խաղը տևում է 40-45 րոպե: Ավագ նախադպրոցականներն ընդունակ են միևնույն խաղը խաղալ մի քանի ժամ իրար հետևից, իսկ որոշ խաղեր շարունակվում են մի քանի օր[8]:

Այսպես խաղը զարգանում և նախադպրոցական տարիքի վերջում հասնում է զարգացման բարձր մակարդակի: Խաղի զարգացման գործընթացում առանձնացվում են երկու փուլեր.

- առաջին փուլին (3-5 տարեկան) բնորոշ է մարդկանց իրական գործողությունների վերարտադրումը:
- Երկրորդ փուլում (5-7 տարեկան) մոդելավորվում են մարդկանց միջև իրական հարաբերությունները, խաղի բովանդակությունը դառնում է մեծահասակի գործունեության իմաստը:

Խաղը նախադպրոցական տարիքի առաջնային գործունեություն է, որը նշանակալից ազդեցություն է թողնում երեխայի զարգացման վրա: Առաջին հերթին խաղում երեխաները սովորում են լիարժեք շփվել միմյանց հետ: Ինչպես ասում է Դ. Էլկոնինը. նրանք «խաղում են կողք կողքի, բայց ոչ միասին»:

---

[7] https://kznakgnahatum.blogspot.com/

[8] Մարությանի Ս.Ա., Դալլաքյանի Ա.Մ. խմբագրությամբ Նախադպրոցական մանկավարժություն, 2005, էջ 29:

Դերային խաղն արդյունավետ իրականացնելու նախապայմանը առաջարկվող դերային իրավիճակի՝ իրականությանը հնարավորինս մոտ լինելու մեջ է: Ուսուցիչը մանրամասն ներկայացնում է իրավիճակի բոլոր կողմերը: Խաղը հաճախ կառուցվում է տարաբնույթ թեմանրի շուրջ: Այն օգտակար է, երբ փորձ է արվում ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ կարող են տարբեր կարծիքներ ունենալ: Մեթոդի արդյունավետությունն այն է, որ

" ձեռք բերած փորձը պահպանվում է երկար,

" այն գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման հետաքրքիր ձև է,

"այն հնարավորություն է տալիս աշակերտներին հիմնախնդիրների իրավիճակային դրսևորումները հասկանալ:

Հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանը գտնում է, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»:

Ինտեգրված պարապմունքներն արդյունավետ են, երբ անցկացվում են խաղային ժամանակակից մեթոդներով: Ըստ Մ. Մոնտեսորիի՝ «Այն խաղը, որն ուսուցանող չէ՝ դատարկ խաղ է»: Երբ երեխան ուսուցանվող նյութը լրացնում է խաղի միջոցով, ապահով

վում են բարձր տրամադրություն, հուզական դրական մթնոլորտ և ակտիվությունը[9]:

[9] «Նախաշավիղ», գիտամեթոդական ձեռնարկ, 2.2016

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ԴԱՍԻ ՊԼԱՆ

Թեմա՝ Կորցրել ենք խոսելու ունակությունը

Նպատակ

- Ճշտել և ընդլայնել երեխաների պատկերացումները գործունեության տարբեր ձևերի ու մասնագիտությունների մասին, նրանք պետք է կարողանան

  -որոշել մասնագիտություններն ըստ կատարած գործաղությունների.

  -առանձնացնել առարկաները ըստ մասնագիտությունների
- Ամրակայել բառապաշարը՝ վարսավիր, շինարար, վարորդ, վանառող, ներկարար, խոհարար, բժիշկ բառերով:
- Դաստիարակել հարգանք աշխատավոր մարդու նկատմամբ, արթնացնել սեր և հետաքրքրություն՝ բոլոր մասնագիտությունների հանդեպ:

Անհրաժեշտ պարագաներ՝ մասնագիտությունների մասին քարտեր, սանր, ներարկիչ, շերեփ, տետր և գրչ, բահ, մեքենա նորոգելու պարագաներ, շինարարական գործիքներ, մեքենայի ղեկ և այլն:

Խնդիրներ՝

- Երեխաները պատկերացում կազմեն մասնագիտությունների մասին
- Տարբերեն պատկերները,
- Ըստ գործիքների կարողանան որոշել թե ինչ մասնագիտության հետ է կապված,
- Արագ կողմնորոշվել:

Ընթացքը՝

Դաստիարակը դիմում է երեխաներին

-Երեխանե՛ր, առավոտյան ծնողները ձեզ բերեցին մանկապարտեզ, իսկ իրենք ուր ու՞ր գնացին: (Աշխատանքի): Դուք գիտե՞ք, թե որտեղ են նրանք աշխատում, ինչ մասնագիտություն ունեն: Օրինակ, ես աշխատում եմ մանկապարտեզում, մասնագիտությամբ դաստիարակ եմ: Պատմեք, խնդրեմ, որտե՞ղ են աշխատում Ձեր մայրիներն ու հայրիկները, ի՞նչ մասնագիտություններ ունեն նրանք (երեխաների դատասխանները):

- Երբ մեծանաք, դուք ևս պետք է ընտրեք մասնագիտություն ձեզ համար:

Այսօր մենք կխոսենք մասնագիտությունների մասին: Դաստիարակը փոքրիկ ոտանավորներ է ներկայացնում մասնագիտությունների մասին, և սկսվում է քննարկումը: Այնուհետև երեխաներին տրվում են հանձնարարություններ. Յուրաքանչյուր աշակերտի ականջից դաստիարակը ասում է մեկ մասնագիտություն, երեխան առանց խոսելու պետք է ներկայացնի այն, օգտագործելով անհրաժեշտ առարկաները, որոնք կապ ունեն տվյալ մասնագիտության հետ, իսկ մյուսները պետք է գուշակեն:

Վարսահարդար

Երեխաներից մեկին տրվում է վարսահարդարի դերը, ով առանց խոսելու պետք է ներկայացնի այն, իսկ երեխաները գուշակեն, վերջում դաստիարակը կարդում է հետևյա բանաստեղծությունը.

Տվեք նրան մկրատ, սանր,

Եվ նա կստանա մի նոր սանրվածք

Վարսահարդարը մեր հարգալից

Կդարձնի ձեր մազերը ժամանակակից:

Այնուհետև դաստիարակը հարց է տալիս.

-Ի՞նչ է անում վարսահարդարը, ի՞նչ գործիքներից է օգտվում նա աշխատանքի ժամանակ:

Երեխան պետք է ներկայացնի վարսահարդարի աշխատանքը:

Շինարար

Երեխաներից մեկին տրվում է շինարարի դերը, նա պետք է համապատասխան գործիքներով ներկայացնի այն, իսկ վերջում դաստիարակը կարդում է հետևյալ բանաստեղծությունը.

Գալիս է աշնանային անձրև,

Առջևում ձմեռ է,

Փա՜ռք նրանց, ով կառուցում է

Տաք տներ,

Ով իր ծանր աշխատանքը

Տալիս է իր երկրին,

Ով կառուցել է մանկապարտեզ,

Ե՛վ քեզ, և՛ ինձ:

-Ի՞նչ են անում շինարարները, ի՞նչ է հարկավոր այդ աշխատանքի համար, ինչպիսի՞ մեքենաներ են իրենց օգնում[10]:

Երեխաները պատասխանում են այս հարցերին:

Վարորդ

Երեխաներից մեկին էլ տրվում է այս դերը, որի ներկայացնելուց հետո դաստիարակը կարդում է.

Ես վարում եմ անդադար,

Զգոն եմ և ուշադիր,

Չեմ սիրում ես կարմիր լույս,

Թող միշտ լինի կանաչ լույս:

Այնուհետև դաստիարակը տալիս է հարցեր.

- Ի՞նչ է անում վարորդը,

-ի՞նչ պետք է իմանա վարորդը:

Խոհարար

[10] И. Багменко, Дидактические игры наразвитиемышления, http://planetadetstva.net/vospitatelam/gotovimsya-k-shkole/didakticheskie-igry-na-razvitie-myshleniya.html.

Միշտ հաճելի է լավ սնվելը,
Երբ ուտելիքը համեղ է:
Իսկ լավ խոհարարների մոտ
Այն միշտ համե՛ղ է:

Յուրաքանչյուր երեխայի տալ մեկ մասնագիտության անվանում, բոլոր երեխաներին ներգրավվել խաղին:

Դիտարկում՝ Դաստիարակը պարապմուքի ընթացքում կիրառեց խաղ-ուսուցու-խաղ, զրույց և խմբային մեթոդները: Արդյունքում բոլոր սաները ներգրավվեցին պարապմունքի մեջ, ձեռք բերեցին նախաձեռնողականության, ինքնուրույնության և ստեղծագործագործական կարողունակություններ: Դաստիարակը պարապմունքը անցկացրեց բովանդակալից, հետաքրքիր և արդյունավետ: Պարապմունքին ներգրավված էին բոլոր սաները և մասնակցում էին բավականին ակտիվ, հարցերին տալիս էին սպառիչ պատասխանել և կարողանում էին ինքնուրույն կատարել իրենց առաջ դրված խնդիրները:

Վերջնարդյունքում դաստիարակը հասավ իր առջև դրված խնդիրների և նպատակների կիրականացմանը: Դասը շատ հագեցած անցավ, շնորհիվ դաստիարակի:

Մեզ շատ դուր եկավ անցկացված դասը, քանի որ այն ուսուցանող էր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը, մենք գալիս ենք հետևյալ եզրահանգումներին.

- դերային խաղը գործունեության այն ձևն է, որը ներառում է կրտսեր տարիքի սովորողների գործունեության գրթե բոլոր ձևերը:
- այն հնարավորություն է տալիս զարգացնել երեխայի երևակայությունը, կամային հատկանիշները, ուշադրությունը,
- նպաստում է երեխայի ինքնարտահայտման զարգացմանը,
- դերային խաղը, երեխայի զարգացման հրաշալի միջոց է, մասնավորապես իրավիճակային դերախաղերը, որոնք նաև հանկարծաստեղծման (իմպրովիզացիայի) մեծ հնարավորություն են տալիս երեխային՝ զարգացնելով նրաև նրա մտածողությունն ու սոցիալական հմտությունները:
- Եթե երեխան սխալ է արտասանում բառը, պետք չէ շտապել հանդիմանել, այլ պարզապես պետք է կրկնել ճիշտ տարբերակը: Դաստիարակին հետևելով՝ երեխաները շատ արագ են յուրացնում պահանջվող կանոնները: Զուգորդումներն առօրյա երևույթների ու առարկաների հետ օգնում են հասկանալ և հիշել նոր բառերը:
- Խոսելիս հարկավոր է մատնացույց անել առարկաները, որպեսզի երեխան ըմբռնի, թե ինչի մասին է խոսքը: Հարկավոր է երեխաների համար ամեն օր կարդալ, և այդ ընթերցանությունը պետք է լինի դանդաղ, պարզ ու արտահայտիչ:
- Դերային խաղն ապահովում է արդյունավետ հաղորդակցություն, զարգացնում է ընդհանրության զգացումը, ուշադրությունը, սովորեցնում է ճիշտ արտահայտել մտքերը, կառուցել երկխոսություններ, զարգացնում է խոսքը: Երեխան սովորում է արտահայտել զգացմունքները, ձգտումները, սովորում է ենթարկել իր

գործողությունները խաղի կանոններին, սովորում է նպատակաուղղված լինել:

Ներկայացվող նյութը կարելի է կիրառել ոչ միայն մանկապարտեզում, այլ նաև դպրոցում, տանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, հիմնադիր և հրատարակիչ՝ Կրթության ազգային ինստիտուտ, 4. 2011, էջեր 64:
2. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, հիմնադիր և հրատարակիչ՝ Կրթության ազգային ինստիտուտ, 2. 2016, էջեր 64:
3. «Նախաշավիղ», գիտամեթոդական հանդես, հիմնադիր և հրատարակիչ՝ Կրթության ազգային ինստիտուտ, 5.2016, էջեր 64:
4. Մախչյան Հ., Մանուկյան Ա., Մանկավարժության ընդհանուր հիմունքները, 1995, էջեր 43:
5. Ալեքսանյանի Է. Ա. խմագրությամբ Նախադպրոցական մանկավարժություն, 1992, էջեր 45:
6. Մարությանի Ս.Ա., Դալլաքյանի Ա.Մ. խմբագրությամբ Նախադպրոցական մանկավարժություն, 2005, էջեր 64:
7. «Դպիր», Մխ. Սեբաստացի կրթահամալիրի մանկավարժական հանդես, 2012, էջեր 40:
8. «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», ձեռնարկ, 2008, էջեր 36:
9. «Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր», Երևան, 2012, էջեր 76:
10. «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», Երևան, 2008, էջեր 64:
11. Սիրամարգ Վարդումյան «Հրաշք մատիկները» ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների և մանկապարտեզի դաստիարակների համար», 2007, էջեր 56:
12. Լալա Սմբատյան, «Խաղերի և խաղ զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում», 2001, էջեր 69:
13. И. Багменко, Дидактические игры наразвитиемышления, 2007, с. 84:

14. Журнал «Дошкольное воспитание. 9/2013, изд. дом. «Воспитание дошкольника», г. Москва
15. Журнал «Дошкольное воспитание. 3/2013, изд. дом. «Воспитание дошкольника», г. Москва
16. http://planetadetstva.net/vospitatelam/ gotovimsya-k-shkole/didakticheskie-igry-na-razvitie-myshleniya.html.
17. Doshkolnoe.org, N7, 2007: